Հայտարարություն

« Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հոբարձու Ա. Ղուկասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ի միացյալ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ «Հոբարձու Ա. Ղուկասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
1) ՀՀ քաղաքացիությունը.
2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝
1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
3) Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
5) ինքնակենսագրություն:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Հոբարձու Ա. Ղուկասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ում 2021 թվականի հոկտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի նոյեմբերի 8-ին՝ ժամը 14:00-ին, «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հոբարձու Ա. Ղուկասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, գ. Հոբարձի փ.1 շենք 5:

Տեղեկությունների համար դիմել՝ 099-76-81-89, ayvarm@yandex.ru:
Հասցե՝ գ. Հոբարձի փ. 1 շենք 5, Հեռ..՝ 093881855, Էլ. փոստ՝ hobardzi@schools.am